**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ**
**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

ք. Երևան «27» նոյեմբերի 2024 թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն N 461-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 342-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով «Գնահատման գործունեության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի, 8-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 18-ի արձանագրությունը, ինչպես նաև Կադաստրի կոմիտեի կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության պետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի N Ն/14968-2024 զեկուցագիրը՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության ոլորտում որակավորման քննությունների հարցաշարերը հաստատելու մասին» N 342-Լ հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից հավելվածի:

11/27/2024

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393